ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«7» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-101/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 22.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Դրայվ-2014» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.09.2016թ. ներկայացրած բողոքով «Դրայվ-2014» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտով գնային առաջարկը եղել է նվազագույնը, ներկայացվել են գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հինավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, բավարարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հրավերով սահմանված պահանջները:

Ընկերությունը հայտնել է, որ համաձայն Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Ընկերությունը պետք է հայտարարվեր որպես ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացրած որոշումներում տեղ գտած հիմնավորումները, որոնք ներկայացվել են կից եզրակացությամբ՝ հիմք են հանդիսացել Ընկերության կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու համար:

Ընկերության կողմից ներկայացվել են վերը նշված եզրակացությամբ տեղ գտած Ընկերության հայտը մերժելու հիմքերը և դրանց վերաբերյալ առարկությունները՝

1. ***Եզրակացություն***-«Դրայվ 2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայան-8-10 հասցեում գործող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի և այն չի փաստագրվել կադաստրի պետական կոմիտեում որպես ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 28.08.2008թ. N 1101-Ն որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի համայնքապետարանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ ԱԳԼՃԿ-ին տրամադրած հողատարածքը՝ շինարարություն կազմակերպելու համար պետք է լինի ոչ պակաս, քան 0,2 հա, իսկ մոնոբլոկ կայանների դեպքում՝ ոչ պակաս 0,1հա, մինչդեռ վերջինս չի ներկայացրել նաև որպես ԱԳԼՃԿ՝ համապատասխան չափով տարածք ունենալու մասին ապացույց:

Ընկերության առարկությունը-Համաձայն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեում պետական գրանցման են ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքները, մասնավորապես դրանց ծագումը, դադարումը, փոխանցումը, փոփոխումը: Նույն օրենքում նախատեսված չէ որևէ պահանջ փաստագրել գազալցակայանը որպես ԱԳԼՃԿ:

«Դրավ-2014» ՍՊԸ-ն հայտնել է, որ բացի վերը շարադրվածից՝ ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ Ընկերությունն իրականացնում է միայն հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառք: Այն չի իրականացնում ավտոգազալիցքավորման ճնշակայանների կողմից իրականցվող այլ գործունեություն (օրինակ՝ գազի ճնշման բարձրացում) և, հետևաբար, չի հանդիսանում ԱԳԼՃԿ և վերջինիս նկատմամբ չեն տարածվում ՀՀ օրենսդրությամբ ԱԳԼՃԿ-ների ներկայացվող պահանջները, այդ թվում այն պահանջները, որոնք սահմանվում են հանձնաժողովի կողմից մատնանշված ՀՀ կառավարության «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 28.08.2016թ. N 1101-Ն որոշման մեջ:

Միաժամանակ Ընկերությունը շեշտել է նաև, որ ամեն դեպքում նշված որոշմամբ հաստատված ԱԳԼՃԿ-ի կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետով սահմանված մակերեսները վերաբերում են միայն շինարարության կազմակերպմանը, այլ ոչ թե գործունեությանը և հանձնաժողովի նման պնդումը ևս չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

2.Եզրակացություն-«Դրայվ-2014» ՍՊԸ-ի գործունեությունը հակասում է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, համաձայն որի՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայան:

Ընկերության առարկությունը- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի նշել, թե «Դրայվ-2014» ՍՊԸ-ին պատկանող լցավորման մշտական (ստացիոնար) կայանը որ

քաղաքաշինական կամ տեխնիկական անվտանգության նորմերի պահանջին է անհամապատասխան, ուստի այս փաստարկը չի կարող դիտվել Ընթացակարգի ժամանակ Ընկերության ներկայացրած հայտի մերժման հիմքում:

3. Եզրակացություն- Ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի գործունեությունը հակասում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասին, համաձայն որի՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները, տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:

Ընկերության առարկությունը- Հիշյալ իրավական նորմը կարգավորում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և որևէ կերպ չի սահմանում որևէ տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի համար իրավունքներ կամ պարտականություններ:

4.Եզրակացություն- Ըստ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեակավարի 24.06.2016թ. N 7/231/8518-15 գրության՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող ԱԳԼՃԿ-ի հակահրդեհային վիճակի և շահագործման վերաբերյալ որևէ դրական եզրակացություն չի տրվել:

Ընկերության առարկությունը- Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 24.06.2016թ. N 7/231/8518-15 գրության՝ «Դրայվ 2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող վաճառքի կետին որևէ բացասական եզրակացություն չի տրվել, ավելին վերը նշված գրությամբ տեղեկացվում է, որ համաձայն նորմատիվ իրավական ակտերի պահանջների գազալցակայանները պետք է բնակելի և հասարակական շինություններից տեղակայված լինեն ոչ պակաս քան 35մ հեռավորության վրա և, որ Ընկերության կողմից տվյալ նորմը պահպանված է:

5. Եզրակացություն- Ընկերության հայտի մերժման հիմք է հանդիսացել նաև լիցենզիայի բացակայությունը:

Ընկերության առարկությունը- Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը չի հանդիսանում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

6. Եզրակացություն-Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Դրայվ-2014» ՍՊԸ-ի գործունեությունը դիտարկվել է հակաօրինական:

Ընկերության առարկությունը- Իրականացվող գործունեության օրինական կամ հակաօրինական որակավորվելը ելնում է այլ իրավական մարմինների լիազորություններից:

7. Եզրակացություն- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 2.1 կետի համաձայն «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են կեղծ տվյալներ:

Ընկերության առարկությունը- Վերը նշված արձանագրությամբ չի նշվում թե կոնկրետ որ տվյալներն են կեղծվել Ընկերության կողմից և այն փաստերը, որոնցով հիմնավորվում է դրանց կեղծ լինելը:

8. «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված է, որ գնման առարկա հանդիսացող ապրանքի սեղմված բնական գազի տեխնիկական որոշակի պայմանների համապատասխանության պայման, այն է՝

Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 մպա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միաջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150^{0}C ջերմաստիճանը:

Ընկերության առարկությունը-Հրավերում չի նշվում, որ սեղմված բնական գազը պետք է մատակարարվի ԱԳԼՃԿ-ի կողմից:

«Դրայվ 2014» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք սեղմված բնական գազի տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ համապատասխանում է հրավերով

նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի պայմաններին, որի մասին հանձնաժողովին ներկայացվել է փաստաթուղթ՝ համաձայն Հավելված 5-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերությանը հրավերի պահանջներին, որակավորման չափանիշներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս պետք է առաջնորդվի իր իսկ կողմից հրապարակված Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով, համաձայն որի՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն նշել է, որ վերջինիս կողմից ներկայացվել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, հետևաբար Ընկերությունն իրավունք է ստացել մասնակցելու գնման ընթացակարգին: Մասնակցության իրավունքի ու որակավորման չափանիշներին համապատասխանության գնահատման համար Ընկերությունից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել: Որակավորման չափանիշներին համապատասխանության գնահատման համար հանձնաժողովը պետք է առաջնորդվի հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտնել է, որ վերջինիս պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող տարածքում պահպանված են հակահրդեհային շահագործման բոլոր կանոնները, տեղադրված են համապատասխան գործիքներ և սարքավորումներ (կրակմարիչներ, հակահրդեհային հիդրանտ, ջրի տարողություն, ջրի պոմպ, հակահրդեհային չկուն խողովակ): Ինչպես նաև տարածքը հակահրդեհային անվտանգության տեսակետից հսկվում է ՍՕՍ համակարգով, որի հետ Ընկերությունն ունի համապատասխան պայմանագիր:

«Դրայվ 2014» ՍՊԸ-ին պատկանող վերը նշված հասցեում գտնվող տարածքում առկա գազալցավորման աշտարակներն անցել են ստուգաչափում և ունեն ստուգաչափման վկայականներ:

«Դրայվ 2014» ՍՊԸ-ն ունի նաև շարժական ավտոգազալցավորիչ, որը գրանցված է ՀՀ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում և ունի գրանցման վկայական:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացրած որոշումները:

2. <u>Զարենցավան համայնքի «Մաքուր Զարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Զարենցավան համայնքի «Մաքուր Զարենցավան» ՀՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.09.2016թ. թիվ 45 գրությամբ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 02.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: 02.09.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցվել է «Դրայվ-2014» ՍՊԸ-ին՝ առաջարկվելով մինչև 07.09.2016թ. ներառյալ ներկայացնել հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Միաժամանակ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.09.2016թ. ստացվել է դրական եզրակացություն՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն 06.09.2016թ. ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, ՀՀ ԱԱՊ «Արմեքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 30.03.2016թ. տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության N

10/1 եզրակացությունը, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 04.12.2014թ. տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության N 3516 եզրակացությունը, այնուամենայնիվ նա չի ճանաչվել որպես ընտրված մասնակից, քանի որ ի սկզբանե վերջինիս գործունեությունը հակաօրինական է, չունի սեղմված բնական գազ վաճառելու թույլտվություն և չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ: Մասնավորապես, «Դրայվ-2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գործող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի, և այն չի փաստագրվել Կադաստրի պետական կոմիտեում որպես ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության 28.08.2008թ. «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1101 որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ ԱԳԼՃԿ-ին տրամադրած հողատարածքը՝ շինարարություն կազմակերպելու համար, պետք է լինի ոչ պակաս, քան 0,2 հեկտար, իսկ մոնոբլոկ կայանների դեպքում՝ ոչ պակաս 0,1 հեկտարից, մինչդեռ վերջինս չի ներկայացրել նաև որպես ԱԳԼՃԿ՝ համապատասխան չափով տարածք ունենալու ապացույց:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընկերության գործունեությունը հակասում է մի շարք պահանջների, մասնավորապես, համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետ է համարվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերի պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայանը:

Պատվիրատուն հայտնել է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները: «7» տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ նավթային գազերի

մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների թույլտվություն:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ ԱԳԼՃԿ-ները համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնց նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշինական նորմերին և ունենան համալիր փորձաքննական դրական եզրակացություն:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 24.06.2016թ. թիվ 7/231/8518-15 գրությամբ տեղեկացվել է, որ «Դրայվ-2014թ.» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող ԱԳԼՃԿ-ի հակահրդեհային վիճակի և շահագործման վերաբերյալ որևէ դրական եզրակացություն չի տրվել:

Ըստ Պատվիրատուի՝ վերոգրյալից ակնհայտ է, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեությունը հանդիսանում է սահմանված պահանջներին չբավարարող, առանց համապատասխան լիցենզիայի առկայության և անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ եզրակացության բացակայությամբ, ինչպես նաև ԱԳԼՃԿ-ների համար սահմանված պայմաններին չբավարարող գործունեություն, այդ իսկ պատճառով էլ հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

3. <u>ԳԲԽ-101/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-101/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-16/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դրայվ-2014» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող հավելված N 1 տեխնիկական բնութագրով սահմանվել է.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագրությունը
1	Սեղմված բնական գազ	Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150 ^{0}C, բայց չպետք է գերազանցի 600 ^{0}C ջերմաստիճանը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության՝

- 1.3 կետով որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Դրայվ-2014» ՍՊԸ-ին:
- 4.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2016թ. սեպտեմբերի 7-ը ներառյալ ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընկերությունը հայտի N 5 հավելվածով ներկայացրել է «Դրայվ-2014» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ տեսքով.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքի տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագրությունը
1	Սեղմված բնական գազ	Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150 ^{0}C, բայց չպետք է գերազանցի 600 ^{0}C ջերմաստիճանը

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության՝

- 1.1 կետով նշել է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը,
- 1.2-րդ կետով արձանագրել է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (եզրակացությունը կցվում է):
- 2.1-րդ կետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ն գնման գործընթացի շրջանակներում ներկայացրել է կեղծ տվյալ, որոշել է՝

ա) «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

6. Պատվիրատուի կողմից «Դրայվ-2014» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ կազմվել է հետևյալ եզրակացությունը.

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն 2016թ. սեպտեմբերի 6-ին ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, ՀՀ ԱԱՊ «Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 2016թ մարտի 30-ին տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության N 10/1 եզրակացությունը, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 04.12.2014թ. տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության N 3516 եզրակացությունը, այնուամենայնիվ նա չի ճանաչվել որպես ընտրված մասնակից, քանի որ ի սկզբանե ***վերջինիս գործունեությունը հակաօրինական է, չունի սեղմված բնական գազ վաճառելու թույլտվություն*** և ***չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ***: Մասնավորապես, «Դրայվ-2014» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գործող գազալցակայանը հանդիսանում է ապօրինի, և այն չի փաստագրվել Կադաստրի պետական կոմիտեում որպես ԱԳԼՃԿ, որովհետև չի բավարարում ՀՀ կառավարության 28.08.2008թ. «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1101 որոշման 18-րդ կետով սահմանված պահանջները, որի պատճառով էլ Չարենցավանի կողմից չի տրամադրվել սեղմված բնական գազի վաճառք իրականացնելու թույլտվություն: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ ԱԳԼՃԿ-ին տրամադրած հողատարածքը՝ շինարարություն կազմակերպելու համար, պետք է լինի ոչ պակաս, քան 0,2 հեկտար, իսկ մոնոբլոկ

կայանների դեպքում՝ ոչ պակաս 0,1 հեկտարից, մինչդեռ վերջինս չի ներկայացրել նաև որպես ԱԳԼՃԿ՝ համապատասխան չափով տարածք ունենալու ապացույց:

Ընկերության գործունեությունը հակասում է մի շարք պահանջների, մասնավորապես, համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետ է համարվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերի պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները: «7» տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների թույլտվություն:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ ԱԳԼՃԿ-ները համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնց նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշինական նորմերին և ունենան համալիր փորձաքննական դրական եզրակացություն:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի 24.06.2016թ. թիվ 7/231/8518-15 գրությամբ տեղեկացվել է, որ «Դրայվ-2014թ.» ՍՊԸ-ին պատկանող Եսայան 8-10 հասցեում գտնվող ԱԳԼՃԿ-ի հակահրդեհային վիճակի և շահագործման վերաբերյալ որևէ դրական եզրակացություն չի տրվել:

Ըստ Պատվիրատուի՝ վերոգրյալից ակնհայտ է, որ Ընկերության կողմից իրականցվող գործունեությունը հանդիսանում է ***սահմանված պահանջներին չբավարարող, առանց համապատասխան լիցենզիայի առկայության*** և ***անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ եզրակացության բացակայությամբ,*** ինչպես նաև ԱԳԼՃԿ-ների համար

սահմանված պայմաններին չբավարարող գործունեություն, այդ իսկ պատճառով էլ հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

4. <u>ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի 28.09.2016թ. թիվ 45 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ *հրավերով նախատեսված փաստաթղթերը*, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ***ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Հրավերի 2-րդ մասի հայտը պատրաստելու մասին Հրահանգի 3.1-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝

ա) առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող հավելված N 1 տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ *սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 մպա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միաջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150^{0}C, բայց չպետք է գերազանցի 600 ^{0}C ջերմաստիճանը:*

«Դրայվ-2014» ՍՊԸ-ն հայտի N 5 հավելվածով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը համապատասխանել է Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին (Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն:

Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150 ^{0}C, բայց չպետք է գերազանցի 600 ^{0}C ջերմաստիճանը):

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ որպես վերոհիշյալ փաստի հիմնավորում ներկայացնելով համապատասխան եզրակացություն:

Վերոհիշյալ եզրակացության համաձայն՝ Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանզի Ընկերության գործունեությունը հակաօրինական է, չունի սեղմված բնական գազ վաճառելու թույլտվություն և չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ:

Կենտրոնն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց Ընկերության գործունեության հակաօրինական լինելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է նրան, որ Ընկերությունը չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ, ապա Կենտրոնն ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, հայտնում է, որ նշված տեխնիկական բնութագրով ոչ թե սահմանվել է, որ մատակարար ընկերությունը պետք է հանդիսանա ԱԳԼՃԿ, այլ սեղմված ***բնական գազը պետք է ստացվի ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլի արդյունքում:*** Ուստի այն փաստը, որ Ընկերությունը չի հանդիսանում հրավերով նախատեսված ԱԳԼՃԿ, չէր կարող դրվել Ընկերության հայտը մերժելու հիմքում:

Պատվիրատուն նշված եզրակացությամբ հայտնել է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը հանդիսանում է սահմանված պահանջներին չբավարարող, առանց համապատասխան լիցենզիայի առկայության և անվտանգության նորմերի պահպանման վերաբերյալ եզրակացության բացակայությամբ, ինչպես նաև ԱԳԼՃԿ-ների համար սահմանված պայմաններին չբավարարող գործունեություն, այդ իսկ պատճառով էլ հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

Այս կապակցությամբ Կենտրոնը հայտնում է, որ Ընթացակարգի հրավերով չի պահանջվել լիցենզիա:

Պատվիրատուն 28.09.2016թ. թիվ 45 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ ԱԳԼՃԿ-ները համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնց նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն քաղաքաշի-նական նորմերին և ունենան համալիր փորձաքննական դրական եզրակացություն:

Պատվիրատուի կողմից հստակ չի նշվել, թե Ընկերության կողմից իրականացվող գործունեությունն անվտանգության որ նորմերի պահանջին չի համապատասխանում, քանի որ Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ը 28.09.2016թ. թիվ 45 գրությամբ Կենտրոնին հայտնել է նաև, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ն 06.09.2016թ. Պատվիրատուին ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, ՀՀ ԱԱՊ «Արմեքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից 30.03.2016թ. տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության N 10/1 եզրակացությունը, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 04.12.2014թ. տրամադրված արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության N 3516 եզրակացությունը:

Կենտրոնը գտնում է, որ վերը նշված փաստի վերաբերյալ Պատվիրատուն ներկայացրել է միմյանց հակասող դիրքորոշումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնն արձանագրում է, որ Ընկերությունը հայտը ներկայացրել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, ուստի վերը նշված հանգամանքները չեն կարող դրվել Ընկերության հայտը մերժելու հիմքում: Նման պայմաններում, ըստ Կենտրոնի, Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Այսպիսով Ընկերության կողմից հայտով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանել է Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրին, որով գնման առարկան հանդիսացել է ***«Սեղմված բնական գազ»*** ապրանքատեսակը: Ուստի Կենտրոնը գտնում է, որ «Դրայվ-2014» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Դրայվ-2014» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 8 արձանագրությամբ կայացված որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-101/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան